

ՄՄԿ Մեկնաբանություն 10

Պետական օգնություն՝ առանց գործառնական գործունեության հետ յուրահատուկ կապի

Հղումներ

- «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8
- «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20

Խնդիրներ

1. Որոշ երկրներում կազմակերպություններին տրամադրվող պետական օգնությունը կարող է նպատակաուղղված լինել որոշակի տարածաշրջաններում կամ արդյունաբերության ճյուղերում տնտեսական գործունեության խրախուսմանը կամ երկարաժամկետ աջակցությանը: Նման օգնություն ստանալու պայմանները կարող են յուրահատուկ կապ չունենալ կազմակերպության գործառնական գործունեության հետ: Նման օգնության օրինակներ են պետության կողմից ռեսուրսների փոխանցումը կազմակերպություններին, որոնք՝
 - ա) գործում են արդյունաբերության որոշակի ոլորտում,
 - բ) շարունակում են գործել նոր սեփականաշնորհված արդյունաբերության ոլորտներում, կամ
 - գ) սկսում կամ շարունակում են գործունեությունը թերզարգացած շրջաններում:
2. Խնդիրը այն է, թե արդյոք նման պետական օգնությունը «պետական շնորհ» է՝ ՀՀՄՍ 20-ի գործողության ոլորտում, և հետևաբար պետք է հաշվառվի այդ ստանդարտի համաձայն:

Փոխհամաձայնություն

3. Կազմակերպություններին տրամադրվող պետական օգնությունը համապատասխանում է ՀՀՄՍ 20-ում տրված պետական շնորհի սահմանմանը, նույնիսկ եթե բացակայում են հատկապես կազմակերպության գործառնական

գործունեությանը վերաբերող պայմաններ, բացառությամբ որոշակի տարածաշրջաններում կամ արդյունաբերության ճյուղերում գործունեություն ծավալելու պահանջից: Այդ իսկ պատճառով, նման շնորհները չպետք է ուղղակիորեն կրեդիտագրվեն բաժնետերերի բաժնեմասին:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1998 թվականի հունվար

Ուժի մեջ մտնելը

Սույն Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 1998 թվականի օգոստոսի 1-ից: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի պահանջների համաձայն: